No. 54419*

Argentina
and
Armenia

Agreement between the Government of the Argentine Republic and the Government of the Republic of Armenia on economic cooperation. Buenos Aires, 7 July 2014

Entry into force: *10 December 2014 by notification, in accordance with article 7*

Authentic texts: *Armenian, English and Spanish*

Registration with the Secretariat of the United Nations: *Argentina, 9 March 2017*

No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.

Argentine
et
Arménie

Accord entre le Gouvernement de la République argentine et le Gouvernement de la République d'Arménie sur la coopération économique. Buenos Aires, 7 juillet 2014

Entrée en vigueur : *10 décembre 2014 par notification, conformément à l'article 7*

Textes authentiques : *arménien, anglais et espagnol*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *Argentine, 9 mars 2017*

Aucun numéro de volume n'a encore été attribué à ce dossier. Les textes disponibles qui sont reproduits ci-dessous sont les textes originaux de l'accord ou de l'action tels que soumis pour enregistrement. Par souci de clarté, leurs pages ont été numérotées. Les traductions qui accompagnent ces textes ne sont pas définitives et sont fournies uniquement à titre d'information.

[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արգենտինայի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ «Կողմեր»),

նպատակ ունենալով զարգացնել երկարամյա բարեկամական հարաբերությունները և համագործակցությունը երկու պետությունների միջև,

ձգտելով փոխշահավետության հիման վրա զարգացնել և ամրապնդել իրենց տնտեսական համագործակցությունը,

համոզված լինելով, որ համապատասխան իրավական դաշտի ձևավորումը կնպաստի համագործակցության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը,

ղեկավարվելով գործող ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներով,

համաձայնվեցին հետևյալի մասին.

Հոդված 1
Առարկա

Կողմերը սույն Համաձայնագրին, գործող ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան, կնպաստեն տնտեսական համագործակցության փոխշահավետ կապերի ընդլայնմանն ու դիվերսիֆիկացմանը տնտեսական զարգացմանն առնչվող բոլոր ոլորտներում, հատկապես.

1. երկկողմ տնտեսական համագործակցության զարգացմանն նպաստող գործունեության խթանման,
2. գործարար կապերի ստեղծման և ընդլայնման,

3. երկկողմ ներդրումների ընդլայնման դյուրացման և հատկապես՝ իրենց պետություններում տնտեսական և ներդրումային հնարավորությունների ուսումնասիրման,
4. երկու պետություններում տնտեսական կապերի ամրապնդման նպատակով համագործակցության ուժեղացման միջոցով:

Հոդված 2

Տնտեսական համագործակցություն

Կողմերը, իրենց պետությունների տարածքներում գործող օրենսդրության համաձայն, պարտավորվում են խթանել և դյուրացնել համագործակցության ընդլայնումը ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև, ներառյալ՝ բիզնես-կազմակերպությունների, կազմավորումների և գործակալությունների: Այդ նպատակով նրանք համաձայնում են.

1. փոխանակել տեղեկատվություն տնտեսական զարգացման և երկկողմ առևտրի, ինչպես նաև տնտեսական ծրագրերի, կանխատեսումների և ռազմավարությունների վերաբերյալ,

2. միմյանց տեղեկացնել առևտրային տոնավաճառների, ցուցահանդեսների գործարար առաքելությունների և խթանմանն ուղղված այլ միջոցառումների վերաբերյալ,

3. դյուրացնել պետական ու մասնավոր հատվածի փորձագետների, ներդրողների և գործարար ներկայացուցիչների փոխանակումը,

4. հայտնաբերել երրորդ երկրներում հայաստանյան և արցախցիներ ընկերությունների կողմից համատեղ գործարարության զարգացման հնարավորությունները և աջակցել դրանց:

Հոդված 3

Համագործակցության մեխանիզմներ

Կողմերը, գործող ազգային օրենսդրությանը համապատասխան, կձգտեն ընդլայնել և խթանել իրենց համագործակցությունը հետևյալ միջոցներով.

ա) տնտեսական զարգացման համար պատասխանատու՝ իրենց կառավարման մարմինների, մասնագիտական կազմակերպությունների, բիզնես միավորումների, առևտրաարդյունաբերական պալատների, տարածքային և տեղական միավորների միջև կապերի ամրապնդում, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տնտեսական բնույթի տեղեկատվության փոխանակման խթանում, ինչպես նաև տնտեսության մեջ ներգրավված իրենց ներկայացուցիչների կամ այլ պատվիրակությունների այցերի կազմակերպում,

բ) երկու պետությունների գործարար շրջանակների միջև նոր կապերի ստեղծման արագացում և սերտացում՝ անհատների և ընկերությունների այցերի, հանդիպումների և փոխգործակցության այլ միջոցներով,

գ) գործարար տեղեկատվության փոխանակում, տոնավաճառներին և ցուցահանդեսներին մասնակցության, ինչպես նաև սեմինարների, խորհրդակցությունների և գործարար համաժողովների կազմակերպման խթանում,

դ) երկկողմ տնտեսական կապերում փոքր և միջին ձեռնարկությունների առավել ակտիվ մասնակցության խթանում,

ե) երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում խորհրդատվության, մարքեթինգի և փորձագիտական ծառայությունների մատուցման ոլորտում համագործակցության խթանում,

զ) իրենց ֆինանսական մարմինների և բանկերի միջև ավելի սերտ համագործակցության խթանում,

է) երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում միջտարածաշրջանային և միջազգային համագործակցության խթանում,

ը) համագործակցություն երրորդ երկրների շուկաներում:

Հոդված 4

Համատեղ միջկառավարական հանձնաժողով

1. Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման նպատակով Կողմերը կստեղծեն տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-արգենտինական միջկառավարական հանձնաժողով (այսուհետ՝ Միջկառավարական Հանձնաժողով):

2. Միջկառավարական Հանձնաժողովը բաղկացած կլինի Կողմերի պետական իրավասու մարմինների ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուր Կողմի նախարարության և/ կամ դրան համարժեք կառավարման մարմնի ղեկավարի նախագահությամբ:

3. Հանձնաժողովի նիստերը անց կկացվեն անհրաժեշտությունից ելնելով, սակայն ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ, հաջորդականության սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետությունում և Արգենտինայի Հանրապետությունում:

4. Միջկառավարական Հանձնաժողովը իր աշխատանքներին մասնակցելու նպատակով կարող է հրավիրել Կողմերի գործարար շրջանակների ներկայացուցիչներին:

5. Միջկառավարական Հանձնաժողովի հիմնական նպատակներն են.

ա) սույն Համաձայնագրի գործունեության և նրա կիրառման ընթացքում ծագող բոլոր հարցերի քննարկումն ու հետևումը,

բ) երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում տնտեսական համագործակցության ծրագրերի քննարկում,

գ) Կողմերի միջև տնտեսական համագործակցության և առևտրի հնարավոր խոչընդոտների զննում:

Հոդված 5

Փոփոխություններ և լրացումներ

Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ և փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Այդ փոփոխությունները և լրացումները կձևակերպվեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող առանձին